

ՌՈՒԶԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏ ԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Տ Կ Ա Յ Ն Ե Լ ՈՒ Մ Ա Մ Ի Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Պռոշյան փողոցի N 31 տանը 2016 թվականի դեկտեմբերի 20-ին բնակված հրդեհի պատճառով այրվել է նշված տան գույքի մի մասը: Գրիգորյանների ընտանիքը հայտնվել է սոցիալապես ծանր վիճակում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով Ռուզան Գրիգորյանի ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու անհրաժեշտությունից, դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Շիրակի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2280 տեղեկանքը (համայնքապետարանում մուտքավորված 2016 թվականի դեկտեմբերի 23-ին N 15643 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հատկացնել Ռուզան Գրիգորյանի ընտանիքին դրամական օգնություն՝ 200.000(երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակցի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 10/7/1 գործառնական դասակարգման (4729) «Այլ նպատակներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից օրենքով սահմանված կարգով:

Ռ.ՄԱՆՈՅԱՆ

Ռ.ԱՄՍՏՐՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լ.ԶԻԼԱՎՅԱՆ

կատարող՝  
ԱՏաջյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**<< ՌՈՒՋԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Պռոշյան փողոցի 31 տանը բնակված հրդեհի պատճառով այրվել են նշված տան մեջ գտնվող գույքի մի մասը: Գրիգորյանների ընտանիքը հայտնվել է սոցիալապես ծանր վիճակում:

Որոշման ընդունումը պայմանավորված է սոցիալապես անապահով Ռուզան Գրիգորյանի ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու անհրաժեշտությամբ:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**<< ՌՈՒՋԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >>ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՑՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ռուզան Գրիգորյանի ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու մասին որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ սվելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: